

Այսպէս է եղած մինչեւ վերջին 19-րդ դարու յիսունական թուականները:

Մեր աղային պատմութեան զիրքերը — մասնական, ընդհանրական, տարեգրական — բոլորն ալ հոգեւորական ժամանակաշրջաններու գործեր են: Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի, Եղիշէ, Եղնիկ, Կորիւն Սքանչելի, Սերէոս, Յովհան Կաթողիկոս, Ասողիկ, Ղեւոնդ Երէց, Ստեփանոս Տարօնեցի, Սամուէլ Անեցի, Մխիթար Անեցի, Լաստիվերացի, Թովմաս Արծրունի, Տ. Յովհան Գառնեցի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Վարդապետ, Թովմաս Մեծորացի, Մատթէոս Ուսնայեցի, Գրիգոր Խլաթեցի, Առաքել Սիւնեցի, Մովսէս Կաղանկատուացի, Սարկաւազ Վարդապետ, Համամ Վարդապետ, Ստեփաննոս Օրբելեան, Առաքել Դաւրիթեցի, ամէնքն ալ առաջ առաջ եկեղեցւոյ պաշտօնեաներ են:

Ես թողի երեք ամենահին անուններ հայ պատմագիրներու (Ազաթանդեղոս, Զենոր եւ Փաւստոս Բիւզանդ), որոնց ժամանակագրութիւնները ինձմէ աւագ ու հիմեր կը համարեմ եկեղեցականներու կողմէ կատարուած քարգւմարտութիւններ:

Յիսունէ աւելի մատենագիրներու մէջ մեզ ծանօթ են երեք աշխարհական կարկառուն դէմքեր միայն, մէկը Գրիգոր Մազիստրոս, երկրորդը Շապուհ Բազրատունի, երրորդը Մխիթար Հերացի*):

* * *

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՍՅՐԵՐՈՒ ՄԷՁ
ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ ՍԲ. ԳԻՐՔԸ
ՊՃՆԱԶՍՐԴԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Եկեղեցւոյ ազատագրութեան առաջին տարիներուն սուրբ հայրեր եւ աստուածաբան

*) Ժամանակագրական կարգով Շապուհ Բազրատունի հետոյն է: Ասոր դրած պատմութիւնը, ղեռ վերջերս, 1900-ական թուականի առաջին տասնամեակին էր որ գտնուեցաւ Էջմիածնի միաբան հանդուցեալ Գալուստ Սարկաւազի ձեռագրը:

Գրիգոր Մազիստրոս մեծ իշխան մըն է, որու հայերէնը անհասկնալի ըլլալու շտի իրթին է):

Մ. Հերացին — ժշկապետ մը — վերջինին հակոտնեան է: Սա թողած է երկ մը՝ «Զերմանց Մխիթարութիւն», որը զրի է սուր Գրիգոր Տղայ կաթողիկոսի ստիպմամբ, եւ դրած է ղեղջուկ ու արծակ բարբառով «զի զիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց»:

վարդապետներ տարակարծիք եղած են ինչպէս պաշտաման յատուկ ճարտարապետութեամբ ազօթալայրի, նոյն եւ շքեղօրէն զրչազրած մատենանի շուրջ*):

Ինչպէս կը տեսնենք, վերջինին դատելալեւրպը յաղթանակեր է:

Արդ, այսպէս կոչուած «թարգմանչաց դարուն» երբ ղեռ նոր հնարուած էր զիրը, կամ վերաճեալերպաւուած տառերով զիրք զըրելը ինքնին մեծ բաւականութիւն էր եղած, մտածե՞ր են, կամ եղե՞ր են մտածողներ զիրքերը պատկերազարդելու:

Այսպէս կոչուած «թարգմանչաց դարուն» կ'ենթադրեմ որ Հայաստանի սահմաններում մկէ աւելի կեդրոններու մէջ եղած պիտի ըլլան «վերձանողներ»:

Իսկ զրքեր պատկերազարդելու միտքը կը կարծուի թէ աւելի ուշ ժամանակ սկսած է*):

Դեռ վերջնապէս պարզուած չէ, թէ այդ թուականէն առաջ ո՞ւր եւ ի՞նչպիսի պատկերազարութիւն եղեր է, բայց որ այսպիսի բան եղեր է, անկասկած է, քանի որ մեզ ծանօթ յայտնի արուեստագիտական զարգացման թըրականներու գործերը ինքնին սպացոյց են, թէ իրենցմէ նախորդները այդ մարդի մէջ աշխատեց են բաւական երկար ժամանակ մը: Յիշեցէք միշտ թէ արուեստը յանպատրաստից մէկ անգամէն չի ծնիր:

Դեռ Ժ. եւ ԺԱ. դարերուն արուեստի այս ճիւղը մեր բնաշխարհի Բարձր Հայք կոչուած շրջանի վանքերուն մէջ մշակուած ըլլալուն ապացոյցը մինչ մեզ հասած զրչագիրներն են:

Ամենահամոզիչ փաստը, թէ, հայեր, թէ՛ բուն իրենց բարձրաւանդակ հայրենիքին մէջ եւ թէ՛ սահմանամերձ բնագաւառներու մէջ սիրահարի պէս վերաբերուած են զիրքեր զըրելու եւ պատկերազարդելու զբաղումին, սա՛

*) Մ. Հերոնիմոս, օրինակ, կը դատապարտէր «հատուոյ զրքերը սեւէ զարդարանքով պծնելը»:

Իսկ Մ. Եփրեմ, ընդհակառակը, կը կարծէր, որ «լաւ էր եւ վայել որ հաւատոյ զրքերը լինէին պծնազարդ»:

*) Հայ զրչագրական յուշարձաններու մէջ մենք մինչեւ Բ. Գար չենք հանդիպիր գիրք պատկերազարդի անուամ յիշատակութեամբ: Այսպիսին միայն 1080-1393 Կիլիկեան հայ թագաւորութեան օրերու տարեգրութեանց մէջ կը հանդիպինք: